8.01.2021
346-83

Բնապահպանության և ընդերքի տեսչական
մարմնի ղեկավար Գնել Հասրաթյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հասրաթյան,

2020թ. դեկտեմբերի 23-ի Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանն ի պատասխան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ ներկայումս Տեսչական մարմինը ստուգում է իրականացնում այն կառույցում, որին պատկանում է հարցման մեջ նշված Արարատի ցիանային պոչամբարը: Գրության մեջ նշվում է նաև, որ «էլեկտրոնային հարցմամբ բարձրացված հարցերին Տեսչական մարմնի աշխատակիցներն անդրադարձ կկատարեն ստուգման ընթացքում՝ իրենց լիազորությունների շրջանակներում»:

Հարկ է սակայն նշել, որ հարցման մեջ ներառված հարցերը կապված չեն տվյալ ընկերությունը այս պահին ստուգելու գործընթացի հետ:

Ուստի ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ այն հարցերի վերաբերյալ, որոնք չեն առնչվում ստուգման գործընթացին, մասնավորապես.

1. «Քանի՞ տոննա պոչանք կա Արարատի ցիանային պոչամբարում և ի՞նչ նյութեր է պարունակում այդ պոչանքը:
2. Տարածքում առկա են ձկնաբուծական լճեր, ինչպիսի՞ պաշտպանիչ շերտ ունի պոչամբարը և ստորգետնյա հոսքերով արդյո՞ք պոչանքը չի հոսում նաև այդ լճերը:
3. Ստուգե՞լ եք երբևէ պոչամբարի հարակից հողերի, լճերի և այդ լճերում առկա ձկնեղենի մեջ ծանր մետաղների պարունակությունը, եթե այո, ապա խնդրել է տրամադրել ստուգումների արդյունքները»:
4. «Հայկական բնապահպանական ճակատ» նախաձեռնությունն ահազանգել է այն մասին, որ 2020 թվականի ապրիլին մեծ քանակությամբ թռչուններ նստել են Արարատի պոչամբարի մակերեսին և սատկել, իսկ մարմինները ընկերության աշխատակիցները թաղել են: Արդյոք եղե՞լ է նման բան: Որո՞նք են եղել սատկելու պատճառները, իրականացրե՞լ եք արդյոք ուսումնասիրություն: Եթե այո, ապա տրամադրեք, խնդրում ենք, ուսումնասիրության արդյունքները:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան